Its report also points to an upsurge in libel lawsuits filed against media outlets over the course of 2011. "The government decriminalized libel and defamation but established high new civil fines that encouraged journalists and media outlets to practice self-censorship," it says.

## William Saroyan's 104th Birthday Celebrated in Fresno



CLOVIS/FRESNO—The Charlie Keyan Armenian Community School celebrated the 104<sup>th</sup> birthday of acclaimed writer and native son of Fresno William Saroyan with a viewing of the award winning documentary Saroyan, the Man, the Writer. CKACS students and families welcomed the film's writer/director Paul Kalinian and his daughter and producer Dr. Susie Kalinian.

As described in his essay How I Shot Saroyan, photographer Paul Kalinian remembered how in 1976 he first met Saroyan at the studio of the Varaz Samuelian, the noted sculptor of Fresno's David of Sassoon statue. Saroyan at first refused to be photographed, telling Kalinian to "get lost." In the end, the photographer's persistence won out. Kalinian gained Saroyan's trust and, with his camera, captured the essence of the 67 year old author in a series of portraits. In 1991, one of the photographs from this collection was adapted into commemorative stamps in both the United States and Soviet Union.

The evening program included a

translated recitation in Armenian of Saroyan's short story The Armenian and the Armenian by CKACS 5<sup>th</sup> and 6<sup>th</sup> graders. Younger students also read their own stories about Saroyan and their aspirations of becoming writers.

Winner of the 1995 Gold Award, Saroyan, the Man, the Writer is an excellent biographical account for both Saroyan aficionados and those unfamiliar with the life of the author, playwright, and humanitarian. In creating the film, the Kalinians gathered numerous photos and memorabilia of historical Fresno and Saroyan's career. These still images are complimented by home movies clips from his family life and travels to Armenia as well as by Susie Kalinian's touching recreations of Saroyan's childhood. Actor Mike Connor narrates the documentary, although a good portion of the film's audio is Saroyan himself—speaking in both English and Armenian in recorded interviews.

Following the film, the Kalinians' entertained questions from the students and parents and presented the school with one of the original Saroyan portraits from the 1976 album.

## US Secretary of State Clinton to Visit Armenia

**Continued from page 1**

The expert is confident that during her visit Clinton will speak about the need to deepen reforms.

"The timing of the visit is interesting, we will already have a new parliament and see what the new coalition will look like," he added.

On June 5, the Secretary will open the U.S.-Georgia Strategic Partnership Commission plenary session in Batumi, Georgia. She will meet also with Presi-

dent Saakashvili and hold discussions with a broad range of political actors and civil society representatives.

The Secretary will travel on June 6 to Azerbaijan to meet with President Aliyev as well as Azerbaijani civil society leaders.

On June 7, the Secretary will co-chair the Global Counterterrorism Forum Ministerial in Istanbul, Turkey and consult with senior Turkish officials on a range of foreign policy challenges, including Syria and Iran.

## Armenia Marks 94th Anniversary

**Continued from page 1**

our unity," he told reporters today.

Dean of the History Faculty of the Yerevan State University Edik Minasian also emphasized the importance of unity in the May victories. However, the first republic existed for just 2.5 years. Which are the lessons

that must be drawn from the loss of the first republic? First of all it was the lack of regular army, a shortcoming that has been corrected today, Minasian said.

Historian Babken Harutyunian, in turn, emphasized the importance of pursuing a correct economic policy and having a strong army.

**Read full report at: [http://www.state.gov/j/drl/rls/hrrpt/humanrightsreport/index.htm?dynamic\\_load\\_id=186326#wrapper](http://www.state.gov/j/drl/rls/hrrpt/humanrightsreport/index.htm?dynamic_load_id=186326#wrapper)**

## Լիբանան

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ՄՇԱԿՈՒԹԱՎՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ «ԱՐԵԳ» ՊԱՐԱԽՈՒՄԲԻ ՀՊԱՐՏԱԼԻ ԵԼՈՅԹԱՆԵՐԸ



Այս շաբաթավերջը կիբանաւահայ արուեստասէր հասարակութիւնը առիթը ունեցաւ վայելելու ժողովրդական պարերու բացառիկ ելայթները, որոնք ներկայացուեցան Նոր Սերունդ Մշակութային Միութեան «ԱՐԵԳ» պարախումբին կողմէ:

Նոր Սերունդ Մշակութային Միութիւնը միշտ պատճէ շի վրայ է եւ ամէն անգամ լայազոյնն ու գեղեցիկը մատուցանելով կը մնայ բարձր եւ հաւատարիմ իր սրբազն առաքելութեան: Հոս պակաղիծ մը բանալով կ'ուզենք մեր յարգելի ընթերցողներուն ուշադրութեան յանձնել, որ Նոր Սերունդ Մշակութային Միութեան տարեկան նախաձեռնութիւններն ու միջոցառումները կ'արտացոլացնեն միութեան նախանձախորհիր վերաբերումը հայ մշակութի պահպանման ու տարածման աշխատանքին մէջ:

Նոր Սերունդ Մշակութային Միութիւնը ի հեծուկս բոլոր խոչընդունելուն ու դժուարութիւններուն, լիբանանի այս տագնապալից օրերուն, իր բոլոր ջանքերն ու աշխատանքները ի սպաս կը դնէ հայ մշակութի վերելքին: Ան միշտ վառ պահելով հայ մշակութի ջանք, յարատել կամքով եւ աշխատանքով զայն կը փոխանցէ նորա-

հաս հայ սերունդին:

Սփիւռքահայ կեանքէն ներս, մասնաւրաբար կիբանանահայ կեանքէն ներս Նոր Սերունդ Մշակութային Միութիւնը իր մշակութային աշխատանքներով գործօն դեր կը խաղայ հայ երիտասարդութեան ազգային դիմագիծն ու հայ ինքնութիւնը պահպանման էական աշխատանքին մէջ:

Հայ պարարուեստը հայելին է մեր ժողովուրդի պատմական հոլովոյթին: Հայկական ժողովրդական պարերու իրենց կատարողութեան ընդմշչէն հոգեկան ամուռ կապ մը կը ատեղծուի հայ ժողովուրդի անցեալին եւ ներկային ու պարողներուն միջեւ: Նոր Սերունդ Մշակութային Միութեան ԱՐԵԳ պարախումբը այդ հոգեկան կապը դրսեւրեց իր բարձր եւ գեղեցիկ կատարողութեամբ, նոր ըրդաժողներու սրահին բեմին վրայ, Որբաթ, Շաբաթ եւ Կիրակի 11, 12 եւ 13 Մայիս 2012-ին:

«Արեգ» պարախումբի այս տարուան համութը, ղեկավարութեամբ հայրենի երիտասարդ արուեստագէտ Արտաւագդ Աւետիս-



եանի, բացառիկ փայլք եւ բուրմունք ունեցաւ իր ներկայացուցած հայկական եւ միջազգային պարերու ծրագիրով:

ԱՐԵԳ պարախումբի նուիրեալ անդամները ներկաներուն համացուցին հմուտ պարողի չափով գեղեցիկ պարարուեստ մը ուր դրսեւրուցաւ պարուսոց Պրն. Արտաւագդ Աւետիսեանի արուեստագէտի ողին ու բժախնդրութիւնը: ԱՐԵԳի պարողները անգամ մը եւս փաստեցին որ նուիրուածութիւնն ու յարատեւ աշխատանքը ամպայման կ'արդիւնաւորուի

Շաբաթ, 12 Մայիս, 2012-ին, երեկոյեան ժամը 8:30-ին, ի ներկայութեան Հայաստանի հանրապետութեան շիւապատճեան Պրն. Կարեն Մաթենոսեանի, պետական երեսփոխաներ Սեպուհ Գալիքիքեանի, ժան Օղասապեանի, Սեթր Սերժ Թուլսարգիսեանի, Նատալի ծէմանի եւ Պրն. Ղաթթաս Խուրիի, ինչպէս նաեւ Պէյրութի Քաղաքապետի ներկայացուցիչ Պրն. Արամ Մալեանի եւ քաղաքապետարանի անդամներուն, Ս.Դ.Հ.Կ.-ի Լիբանանի Շրջանի վարիչ Մարմնոյ Ատենապետ Պրն. Ալեքսան Քէօշկէրեանի եւ վարիչ Մարմնոյ անդամներուն, լիբանանցի արուեստաէր հիւրերուն, հայ եւ տեղական մամուլի ներկայացուցիչներ:

Բուռն եւ արուեստասէր հասարակութեան, տեղի ունեցաւ Նոր Սերունդ Մշակութային Միութեան ԱՐԵԳ պարախումբի համութը: Բեմ բարձրացաւ ԱՐԵԳ պարախումբը իր երէց, միջակ ու փոքր պարողներով եւ զմայեցուց հանդիսատեսը:

Պարախումբը իր բացման «Բերդ Պար»ով ցուցաբերեց ապառաժեաց կատարողութիւն, որ կը դրսեւրէր Հայ ժողովուրդի տոկունութիւնն ու դարաւոր գոյատեւմը:

Բացման խօսքը արաբերէն եւ հայերէն լեզուներով կատարեց Նոր Սերունդ Մշակութային Միութեան աստենապետուհի Տիկ. Անի Եփրեմեան: Ան բարի գալուստի մալթանքէն ետք, շեշտը դրաւ Ն.Ս.Մ.Մ.-ի անհրաժեշտ եւ գործօն գերին մասին լիբանանահայ սփիւռի մէջ: Ան աւելցուց ըսելով թէ նոր Սերունդ Մշակութային Միութիւնը մնարով պատճէ շի վրայ եւ յաղթահարելով իր դիմաց ցցուած բոլոր խոչընդուներու հաւատարիմ կը մնայ մշակութի պահպանման, փոխանցման եւ զարգացման աշխատանքին մէջ: Ապա, Տիկ. Անի Եփրեմեան շնորհակալութիւն յացնեց բոլոր անհատ ազգայիններուն

Տար.թ էջ 18

## GUARDIAN-Ի ՔՆՆԱՎԻՕՍԱԿԱՆԸ

ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆԻ ԹԱՏՐՈՒՆԻ «ՃՈՆ ԱՐՔԱՆ»՝ ԼՈՆՏՈՆԻ GLOBE-Ի ԲԵՄԻՆ ՎՐԱՅ.

Բրիտանական Guardian պարբերականը անդրադարձած է Լոնտոնի մէջ Սունդուկեանի թատրոնի ներկայացուցած «Ճոն Արքան» աշխատանքին (բեմադրիչ՝ Տիգրան Գասպարեան): Քննախօսականին մէջ մասնաւրապէս գրուած է.

«Իմ կողքին նստած շատ տեղեկատուական հայ ճենթըլմէնը կը յայտնէ, որ լատիներէնով ծիրանին կ'ըսեն րցուս արտենիկ (հայկական սալոր), - կը գրէ յօդուածագիրը, - Ան ինծի ատիկա ըսաւ, քանի որ Globe թատրոնը կը լեցուի դրտուկի՝ աւանդաբար ծիրանինի փայտէ պատրաստուող գործիքի չնշիններով, երբ Սունդուկեան թատրոնի «Ճոն Արքան» ներկայացումը ճոխ մէկնարկ կու տայ:

«Գուցէ Շեքսֆիրը ատիկա իրերեւ ողբերգութիւն գրած է, բայց այս երեկոյի բեմադրութիւնը Տիգրան Գասպարեանի կողմէ, միտուած է աւելի շատ կատակերգականի վրայ կենտրոնանալուն: Փիեսը կը մէկնարկէ հերոսներու աղմկոտ ծիծաղ-կատական պագագրական երաժշտութիւն կը նուագեն: Դերասանները կը մտնեն՝ իրենց հայ բերե-

լով հնառն ճամպրուկներ՝ հաւանաբար ի նշան տեղի ողջոյնի մէծաթիւ հանդիսատեսներուն, որոնք մասսամբ Հայաստանէն Մեծ Բրիտանիա եկած են: Փիեսի տարբեր հաստուածներուն մէջ այդ ճուղ ճամպրուկները հու ու հու ժողովուրդի անցեալին եւ ներկային ու պարողներուն միջեւ:

Ինքը՝ Ճոն արքան, պատկերուած է իրերեւ ցամկոտ, արտասովոր եւ երեսն ալ ծաղրածուանման կերպար՝ Արմէն Մարութեանի կողմէ, որ յաճախի իր գրպանէն կաշիէ թագը կը հանէ, կը թափահարէ օդին մէջ՝ նախանացի մէջ՝ նախանացի ամուռ իր գլխուն տեղադրելը՝ գահի նկատմամբ իր իրաւունքը հաստատելու համար:

Տիգրան Ներսիսեանի թատրարը կը կերտուի իրերեւ հայական կատական կազմի ամէնէն անկեղծ ներկայացուցիչն է (հակառակ որ նոյնիսկ ան չի կրնար դիմանալ մերթ ընդ մերթ հանդիսատեսի հետ կատակելու գայթակղութիւն),



մինչդեռ Արթուրը՝ երիտասարդ ֆրանսացի իշխանը, որ պէտք է պաշտպանէ իր կեանքը, ներկայացուած է իրերեւ ապատիկ հարբեցող:

Կեղծ քարտինալ Պանտոլիֆը եւս մէկ գուարճալի կերպար է, որուն կտրուկ շարժուածները եւ արտառոց շարժուածները հանդիսատեսի կնճարական ստիլութիւնի վայակացի կատական ինդանու, ճանապարհուած գուուկ կը կուկանու իրաւունքը հաստատելու համար:

անոր յայտնուելուն պէս: Կանանց կերպարներն են, սակայն, որ կը մատուցեն ուշադրութիւն իրենց վրայ սեւեռող խաղ: Նելլի Խէրանեան գերազանց է կնճուռ, ճանապարհուած գուուկ կը կուկանու իրաւունքը հաստատելու համար:

Տար.թ էջ 18

# ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆՅԱԿԱԼՈՒՄԸ

Կիրակի Սայիս 27, 2012

«Ա. Հոգույն հեղումը աշակերտներուն վրայ ներքին զօրութիւն մքնէ որ անոնց հոգին վրայ կ'ազդէ, միտքը կը լուսաւորէ, սիրտը կ'ուղղէ, կամքը կը զօրացնէ, վարանումը կը փարատէ, արիութիւն կը ներշնչէ և ազիցնութիւն ընելու կարողութիւն կուտայ»:

## ՄԱՂԱՔԻԱ ՊԱՏՐԻԱՐք ՕՐՄԱՆԵԱՆ

ԳՐԵՑ՝ ԴՈԿՏ. ԶԱԻԷՆ Ա. ՔՀՆՑ.  
ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆՍ

Պատահածը մեծապոյն հրաշքն  
էր Յարուցեալ Քրիստոսի Համ-  
բարձութիւն անմիջապէս ետք, երբ  
այդ օր տասնընթէկ աշակերտները  
դիտեցին Տիրոջ Երկինք համբառ-  
նալը, լսելով նաև աստուածային  
ձայնը թէ ինչո՞ւ ապշած կը նայիք  
Տիրոջ դէպի Երկինք մեկնիլը.  
ինչպէս Անոր Երկինք համբառնալը  
տեսաք, նոյնպէս պիտի գայ կրկին  
իր Երկրորդ Գալատեաթթ: Տաս  
օրեր ետք, Հոգին Սուրբ իշաւ  
Վերնատան մէջ խմբուած աշա-  
կերտներուն եւ իրենց հետեւորդ-  
ներուն վրայ՝ «անուանց իբրեւ  
տարիւր եւ քսանից»:

Յատուկ տօնի մը կը պատահէր հրաշքով լի այս դէպքը: Տօնին նշանակութիւնը Տասնաբանեաց Պատուիրաններուն յանձնումն էր Մովսէս Մարգարէին որոնք եղիպատուի ելքին 50 օրեր ետք տրուած էին Սինայի անապատին մէջ: Պենտէկոստէ յունարէն բառն է նոյն տօնին ուր դարձեալ յիտուն թիւը կը պարունակէ: Քրիստոսի Յարութիւնին ետք նոյնպէս յիտուն օրեր անցան երբ Տիրոջ խոստացեալ Սուրբ Հոգին իջաւ Վերնատուն ուր «էին ամեննեքնան միասին»:

Վերնատան մէջ յանկարծակի  
առանձին բոցերու նման լեզուներ  
իջան իւրաքանչիւր աշակերտի վրայ  
որոնք զօրացան եւ գիտութեամբ  
գերազանց գտնուեցան: Աշակեր-  
տութենէն Առաքեալներու փոխուե-  
ցան: Անոնք գիտցան թէ պիտի  
երթային ինչպէս նախապէս կանչ-  
ուած էին: Այս անգամ «գնացէք  
այսուհետեւ» պատգամը սրբազործ-  
ուեցաւ Սուրբ Հոգիով ու աստուա-  
ծային զօրութեամբ:

Ո՞վ է Սուրբ Հոգին: Ա. Երրորդ դութեան երրորդ Անձնաւորութիւնն է Ան որ ափուուեցաւ որպէս Շունչը Արարիչ Աստուծոյ, ստեղծագործութեան առաջին օրն իսկ երբ «Աստուծոյ Հոգին կը շրջէր» Աստուծոյ նորաատեղծ տիեզերքին վրայ: Հետոքհետէ Ս. Հոգին ճանչցուեցաւ որպէս Աստուծոյ իմաստութիւնն ու զօրութիւնը: Ամէն անգամ որ Աստուած ափիտի յայտնուէր, Հոն էր Ս. Հոգին: Սուրբ Կոյս Մարիամ Ս. Հոգիէն յրացաւ եւ ծնաւ Յիսուս որ սկիզբէն Աստուծոյ Որդին էր: Յիսուսի Մկրտութեան պահուն նոյն Ս. Հոգին իջաւ իր վրայ աղաւնակերպ եւ հաստատեց Աստուծոյ Որդի ըլլայր:

მათ დამისი ურებელი ცლალი:  
ხელებების აქტების დანაშაულ  
უ. პიფჩის ირავხს «Աղբեւը կենաց եւ  
բաշխող շնորհաց»: Շնորհներու  
բաշխութը կատարուեցաւ միացն Ս.  
Հոգիին միջոցաւ որպէս պարզեւ  
արուած Աստուծոյ Կողմէ՝ ամէն  
անոնց որոնք հետեւեցան Քրիստո-  
սի Մկրտութեան եւ «Ս. Հոգիին  
մեռասին ծնան»:

Վերստին ծնան»:  
Սուրբ Հոգին Աստուած հա-  
ղորդակից եւ կենդանարար շունչը  
եղաւ Քրիստոսի եւ քրիստոնեանե-  
րու միջեւ Սուրբ Խորհուրդներու  
կատարմամբ, այնպէս ինչպէս ինք  
պատուիրած էր: Հոգին Աստուած

Էղաւ մշտնջենի իմաստութիւնն ու  
զօրութիւնը Աստոծոյ՝ որոնցմով  
Եկեղեցին հաստատուեցաւ Պենտե-  
կոստէի Հոգեգալստեան դէպքին  
ճիշդ օրը: Քրիստոսի Եկեղեցին իր  
Մարմինը եղաւ Ս. Հոգիի զօրու-  
թեամբ, եւ շրջեցաւ աշխարհի չորս  
կողմ այնպէս ինչպէս իր հողեղին  
մարմինը շրջեցաւ մարդոց մէջ,  
քարոզելով, բժշկելով, Հայր Աս-  
տոծոյ հետ իր անմիջական կապը  
սորպեցնելով: Քրիստոսի մարդկա-  
յին Մարմինն ու իր հաստատած  
Եկեղեցին եղան նոյնը, բնութեամբ  
եւ ներգործութեամբ:

Սուրբ Հոգիի գալուստը ճշղելով, Յիսուս կանուխին յայտնեց թէ «Հայրը պիտի դրկէ Մխիթարիչ Ս. Հոգին իմ անունով որ պիտի յիշեցնէ եւ սորվեցնէ ձեզի այն ամէն ինչ որ խօսեցալ ձեզի»: Եւ իրապէս իր Յարութենէն յիսուն օրեր ետք ճիշդ այդ էր որ պատահեցաւ, եւ Հայր Աստուծոյ Շունչը Որդիին անունով բոցավառ եւ դղրդիւն իջաւ Վերնատուն աղօթքով եւ սպասումով հաւաքուած աշակերտներուն եւ հարիւր քսան հետեւորդներուն վրայ որոնք «ամենեքեան», լրւսաւորուեցան միտքով եւ հոգեով, տարբեր լեզուներ ակասն խօսիլ եւ Տիրոջ առաքելութիւնը իսկոյն շարունակելու պարտքը կապառեաին:

Միայն տեղացիներ չէին որոնք  
ականատես եղան այդ հրաշալիքին:  
Եկած էին նաեւ զաղթավայրերէ  
հրեաներ՝ «արք երկրպածք» որոնց  
աշխարհագրական դիրքն ալ ճշդած  
է Գործք Առաքելոց գիրքին հեղի-  
նակը. Ղուկաս Աւետարանիչ, շար-  
քով թուելով քաղաքներու անուն-  
ները, թիւով 12, Պարթեւաստանէն,  
Միջագետքէն, «Հրէաստան» եւ Կա-  
պադովկիայ, Պոնտոս եւ մնացեալ-  
ները, աշխարհագրական ծիշդ կար-  
գով:

Հեռուէն եկողները կը լիշուին  
իբրեւ հրեաներ որոնք «լսէին լիւ-  
րաքանչիւր լեզուս խօսիլ նոցա»:  
Դժուար եղած է միշտ հասկնալ այս  
կէտը, բացի եթէ լեզուներու շնորհ-  
քը ենթակայական եղած ըլլար,  
այսինքն Առաքեալներ իրողապէս  
տարբեր լեզուներ չէին խօսած, այլ  
լսողները տարբեր լեզուներ գիտ-  
նալով, «թարգմանաբար» կը հասկ-  
նացին Առաքեալներուն լեզուն, այն-  
պէս թէ գաղթականներ իրենց գիտ-  
ցած լեզուներով կը հասկնացին:  
Այս տեսակ մեկնաբաններ չեն կար-  
դար Ղուկասի գրածը ճիշդ կերպով  
թէ «Առաքեալներ սկսան խօսիլ  
տարբեր լեզուներ», եւ ոչ թէ  
ունկնդիրները հասկցան իրենց լե-  
զուններով:

զիւսներով։ Յիշուած 12 վայրերուն առաջիններուն մէջ «Հրէաստան» մը կը լիշուի որ չէր կրնար Կապադովկիոց եւ Միջագետքի միջեւ ըլլալ, այլ ան պիտի կարդացուէր «Հայաստան», ինչպէս եկեղեցական հին հայրեր, Տերտուղիանոս եւ Օգոստինոս, սրբագրած են։ Օրմաննեան Պատրիարք եւս կ'անդրադառնաց իր «Համապատում» գիրքին մէջ եւ այդ ճշգումը կատարելով կը լաւնէ թէ Հայաստանէն



Հրեայ գաղթականներ եւս Երուսա-  
ղիմ զացած էին տօնին եւ վկաները  
եղած Հոգեգալստեան դէպքին:  
Յաւարաւանէ Էրեր, Հոգեգալստ:

Յայտնապէս երկու Հրէաստան չէր  
կրնար ըլլալ երբ Հոգեգալստեան  
դէպքը արդէն հոն Հրէաստանի մէջ  
կը կատարուէր:

Հետեւութիւնն այս պիտի ըլ-  
լայ որ եթէ «հեռուներէն եկողներ  
իրենց տեղական լեզուները կը  
լսէին Արաքեալներու բերնէն», ընա-  
կանաբար Հայաստանէն գացող-  
ներն ալ հայերէն պիտի լսէին:  
Հայաստան ու հայեր այս կերպ

անուղղակիօրէն բաժին կ'առնէին  
Հոգեզալստեան շնորհաբեր դէպ-  
քին մէջ:

Ս. Հոգևոյ գալուստը Աստուծոց  
ծոյն ներգործութիւնն է իր Եկեղեցիին միջոցաւ: Ամէն Սրբազնան  
Խորհուրդ Ս. Հոգիէն «կը շարժի»,  
եւ ինչ որ աստուածային է այդ  
աղբիւրէն կը բխի, ինչպէս Յիսուս  
ըսաւ իր աշակերտներուն թէ Հայրը  
պիտի դրկէ զայն իմ անունովս  
եւ երեքը միասին պիտի փառաւո-  
րեն Սուրբ Երրորդութիւնը ընդ-  
միշտ:

# ԵՐԲ ՊԻՏԻ ԱՊԱՀՈՎՈՒԻՆ MEDICARE Ե SOCIAL SECURITYԻ ՎԵՐՈՒՄՆԵՐԸ

ՎԱՐՈՒԺԱՆ ԳՐԱԶԵԱՆ

Գիտենք անշուշտ Medicare կը ստացուի 65 տարիքին ետք, իսկ social securityի եկամուտը 62 տարիքին ետք: 62 տարեկանին social security-ն կը վճարէ իրաւունքին 80 առ հարիւրը միայն: Այնպէս որ անոնք որպես առողջ են եւ աշխատելու ընդունակ, մանաւանդ երէ ֆիզ տուրք սկսած են վճարել, լաւ կ'ընեն երէ աշխատանք ցոյց տան մինչև 65 տարիքը, ենցինսկ աւելի վերջ ալ որպէսզի լրիւ ստանան իրենց իրաւունքը, ֆիզ մըն ալ աւելի: Եթէ անձնական գործ ունին, ոմանք գործին անունը կը դարձնեն սիրելիի մը (կնոջը կամ զաւակներուն) եւ նոյն ատեն կը ստանան social securityի եկամուտը:

Medicareի հարցը տարեցները անշուշտ, առողջապահական խնամքի շատ աւելի պէտք ունեն բան ունեն այլ տարիքի:

Սակայն այս ապահովագրութիւնը բատ շատ մեծ դժուարութիւն երու պիտի հանդիպի մօտիկ ապօյին, քանի որ վեճարումի համար պահեստի դրամը կը նու ազի տարու է տարի: Այս դժուարութիւնները աւելի պիտի սրին տարիներու ընթացքին, երկու հիմնակնա պատճառներով: Առաջին՝ բժշկական ծախսերը յարատել վերելքի մէջ են: Երրորդ պահեստի համար երիտասարդ աշխատողներուն վեճարած տուրքերը կը նու ազին, մինչ նպաստընկալներուն թիւը կ'աւելնայ, մանաւանի անոր համար որ մարդիկ աւելի երկար կ'ապրին, բժշկական գիտութիւններու յառաջացումին իբր արդիւնք: Երրորդ պատճառ մըն ալ կարելի է աւելցնել: Ծուրջ չորս տարի առաջ սկսած տնտեսական տագմապի հետեւանենք, աշխատող եւ տուրք վեճարողները կը նու ազին, կամ ֆիզ ամսական ստանալով ֆիզ գումար կը վեճարեն պահեստի սնուուկին:

Կրթական հայտնությունը պահպանվում է 2024 թվականի մայիսի 1-ից մայիսի 31-ը ըստ ՀՀ օրենքի՝ պահպանվում է 2024 թվականի մայիսի 1-ից մայիսի 31-ը:

Այս տուեալներով նախազահ Օպաման վերջին պիտի է ծրագիրով ըսաւ «կը Վատահեցնեմ ձեզի որ social securityն առողջ պիտի մնայ ապագային ալ»: Խօսիլը դիւրին է, ինչպէս ըսաւ նաև մեկնարան մը, սակայն մինչեւ այսօր որեւէ առաջարկ չներկայացուց ան, նեցուկ կանգնելու համար ներկայ դրութեանց որպէսզի վերջնականապէս ապահովուին թէ social securityն եւ թէ medicare-ը: Տարիէ մը ի վեր եղաւ վերլուծումները, մեկնարանուրինները եւ զանազան առաջարկները բաղդատելով եւ համադրելով կարելի է ըսել որ ամենալաւ լուծումը նախազահական թեկնածու Միք Ռամնիի թելադրութիւնն է, ըստ իրեն, նախազահ Օպաման պէտք է ծրագիր մը մշակէ ու ներկայացնէ, եւ ժողովուրդը ընտրէ եւ որոշէ իր նախընտրութիւնները այդ ծրագրին մէջ եղածներէն: Նման բայց մը շուտով պէտք է առնուի ըսաւ ան, նյոնիսկ նախազահական ընտրութիւններէն առաջ: Մեկնարան լրագրող մը կ'ըսէ թէ մինչեւ որ ընդունելի որոշում մը չստորագրուի, հանգստեան տարիի մօտեցողները լաւ կ'ընեն իհմակուրենէ իրենց պիտին դասաւորել եւ կարգի դնել կարենան դիմքրաւել social securityի եւ medicare-ի կրնատումները, մի գուցէ օր մը բոյորովին դադրիր:

# ԻՐԱՆԱՀԱՅ ԱՆԴՐԱՆԻԿ ԱՐՁԱԿԱԳԻՐԸ ԱՆԴՐԱՆԻԿ ՍԱՐԵԱՆ (1914-2012)

Իրանահայ գրող եւ հասարակական գործիչ Անդրանիկ Սարեանը 98 տարեկան հասակում կենացին հրաժեշտ տևեց Մարտի 6-ին Կալիփորն-իայի Գլենդելում, ուր արդեն 25 տարի էր, ինչ հաստատվել էր: Անդրանիկ Սարեանը չարմահայցի էր եւ հպարտանում էր իր իրանական ծագումով: Նա իրանահայ ամենալուրջ արձակագիրն է, գրում է, ոչ միայն արևստի ու գրական գործեր յօրինելու համար, այլ՝ հասարակական խնդիրներ արծարծելու նապտակով, ինչպէս «Անլոյս բառուղիներում» յուշավէպում կամ անցեալը անհետացումից փրկելու միտումով, ինչպէս «Պատմութիւն Զարմահալ Գաւառի» աշխատութիւնում, ուր փորձում է արձանագրել իր ծննդավայրի կենցաղն ու ազգագրութիւնը: Սարեանը ակտիւ էր մինչեւ կեանքի վերջին օրերը: Երբ սկսեցին «Հանդէս»-ի հրատարակութիւնը, նա մի նամակով ողջունում է նոր պարբերաբերի հրատարակութիւնը եւ մանրամասն անդրադառնում է իրանական երեք թեմերի էջմիածնից անշատման հարցին, որը նա դատապարտում է ամենախիստ բառերով: Խոկ երբ վերջին տարիներին հարցեր են առաջ գալիս Հնդկաստանի Մարդասիրական նեմարանում, նա հարկ է զգում որպէս նեմարանին լաւածանօր անձնաւորութիւն «Ազգ» օրաթերթում անդրադառնալ խնդրին: Մեր ընթերցողին հրաւիրում ենք կարդալ Ազատ Մարտեանի յօդուածը արձակագրի մասին, միաժամանակ ընդունելով, որ Անդրանիկ Սարեանի ժառանգութիւնը կարու է աւելի մանրակրկիտ եւ նննադատական ուսումնասիրութեան:

## ԻՐԱՍԱՐԱՅ ԿԵԱՆՔԻ ԱՆԿԵԴՈ ՎԿԱՆ

## ԱԶԱՏ ՄԱԹԵԱՆ

Այս տարրուայ Մարտին Հոս  
Անջելոսում 98 տարեկան հասա-  
կում աշխարհին հրաժեշտ տւեց  
Անդրանիկ Սարեանը: Իր ֆիզիկա-  
կան աւարտին հասաւ շուրջ մէկ-  
դարեայ մի կեանք, որի աշխար-  
հագրական գլխաւոր հանգրուան-  
ներն են իրանի Զարմահալ գաւա-  
ռի Սինագան գիւղը, Կալկաթայի  
Մարդասիրական ճեմարանը, Իրա-  
նի Նախթարդիւնաբերութեան եր-  
բեմնի մայրաքաղաք Աբադանը,  
Թեհրանը եւ իհարկէ վերջին հանգր-  
ուան Հոս Անջելոսը:

Անդրանիկ Սարեանը մշակոց-  
թի մարդ էր: Նրա հետաքրքրու-  
թեան ասհմանների մէջ էին գտնուում  
պատժութիւնը, հասարակական  
կեանքը, գրականութիւնը, թատ-  
րոնը, գեղանկարչութիւնը, սպոր-  
տը, բայց հիմնականում նա իրա-  
նահայ մշակութային կեանքում ճա-  
նաչուում է որպէս արձակագիր:

Ըլեալ պահին Ա. Սարեանի  
հրատարակուած գործերից մեզ հա-  
սանելի են՝ «Պատմութիւն Զար-  
մահալ Գաւառի» (1981), «Պատմ-  
ուածքներ» Ա եւ Բ հատոր (1987),  
«Անլոյս քառուղիներում» (2002)  
եւ «Մեր Օրերի Մարդարէն» (2005):  
Հրատարակուած են նաև «Հայկա-  
կան Վագրը» (1986) եւ «Մեր  
Պղնձեալ Գաւր» (2002):

«Պատմութիւն Զարմահալ  
Գաւառի»-ն ցայծմ մնում է իր  
տեսակի մէջ միակ քիչ թէ շատ  
համապարփակ աշխատութիւնը  
իրանի Սպահան նահանգի այս  
երբեմնի ծաղկուն հայաբնակ գա-  
ւառի պատմութեան մասին։ Աշ-  
խատութիւնը, բացի իր պատմա-  
կան արժէքից, խօսում է հեղինակի  
իր ծագման ու ծննդավայրի հետ  
պահպանած հոգեկան կապի եւ իր  
ծագման նկատմամբ առանձին նա-  
խնանձակինդրութեան մասին։

Հրատարակուած գործերից էլ  
կարելի է տեսնել, որ բազմաժանր  
ու բազմաբնոյթ է Անդրամիկ Սար-  
եանի գրական վաստակը: Հրապա-  
րակախօսութիւն, յուշագրութիւն,  
գրական քննադատութիւն, պատմ-  
ուածք, վէպ: Նա իրանահայ կեան-  
քի գեղարւեստական պատկերձան  
լաւագոյն ներկայացուցիչներից  
մէկն է, իսկ արձակագիրների թիւը  
մեր համայնքում, ինչպէս զիտենք,  
մեծապէս զիջում է բանաստեղծնե-  
րին: Եւ ընդհանուր առմամբ կա-  
րելի է ափսոսանքով նշել, որ մեր  
բազմադարեայ համայնքը չի ստեղ-

ծել իր պատմութիւնն ու մանաւանդ կենցաղը մարմնաւորող արժէքաւոր գեղարուեստական գործեր: Մենք այստեղ նշում ենք երեւոյթը, չսորանալով պատճառների վերլուծութեան մէջ, որը կարիք ունի առանձին լուրջ ուսումնասիրութեան: Այս տեսակետից էլ գնահատելի է Անդրանիկ Սարեանի կողմնորոշումը իր գրուած քններում իրանահայ կեանքի առանձին դրուազներ եւ մասնաւորապէս իր եւ իր սերնդակիցների կեանքը գեղարուեստորէն մարմնաւորելու փորձը: Գեղարուեստական արձակի (պատմուածք, վէպ, թատերախաղ) մէջ է, որ յաղթահարւում է ամէն ինչ ջնջող ու աւերող ժամանակը, նրա միջնորդութեամբ է, որ շարունակում են ապրել մարդիկ, իրենց կենդանի խօսուածքով, իրենց մեծ ու փոքր լոյզերով ու մտորումներով, մի խօսքով իրենց անկրկնելի անհատականութեամբ ու ճակատագրով:

Ընդամենը ութիւն տարեկան մասուկ Անդրանիկը գեղջուկ մասնուկների 40 հոգանոց մի խմբի հետ կտրւում է հարազատ գիւղից ու ընտանիքից եւ ընկնում ամբողջովին խորթ ու անծանօթ մի միջավայր՝ Կալիաթայի Մարդասիրական ծեմարանը, որը եւ գծում է նրա եւ իր ընկերներից մեծ մասի ճակատագիրը, որպէս իրանի նաֆթային ընկերութեան պաշտօնեաներ, դրան զուգահեռ նաեւ ազգային հասարակական, մշակութային գործիչներ։ Այս մարդկանց պաշտօնական եւ իր ընդհանուր գծերի մէջ միակերպ կերպարի մասին տեղեկութիւններ կարելի է քաղել, եթէ դա իհարկէ կը հետաքրքրի որեւէ մէկին, հէնց պաշտօնական գրագրութիւնների ծալքերում, բայց թէ ինչպիսիք են եղել նրանք, որպէս իրական մարդկի, որպէս նաֆթային հզօր աշխարհակալու-



Ժամանակաշրջանի եւ առնուագն  
երեք գլխաւոր մայր ցամաքների  
տարածքով մէկ «Աննշան» մար-  
դիկ, առանց որոնց, սակայն, ժա-  
մանակն ու աշխարհը կը մնայ  
ահաւոր կերպով դատարկի, եւ որոնց  
մասին մենք կարող ենք իմանալ  
միայն Սարեանի գրուած քնների մի-  
ջոցով։ Ինքը՝ Սարեանը այսպէս  
հետեւեալ երկու պարբերութիւն-  
ների մէջ է փորձում սեղմել իրեն  
եւ իր ընկերներին վիճակուած  
ճակատագիրը.

Uterus.

Մեր գեղջկական ծննդավայրի  
երազանքով անցաւ մեր մանկու-  
թեան օրերի մի սպանուած մասը  
եւ հեռաւոր հայրենիքի այրող  
կարօտով՝ գիտակից պատանեկու-  
թեան ամբողջ օրերը: Բայց ոչ մեր  
ծննդավայրին հասանք, ոչ հայրե-  
նիքին մեր հասունացած կեան-  
քում: Ցիր ու ցան եղանք- մի մասը  
Լոնդոն, մի քանիսը Ամերիկա, մի  
քանիսը Աւստրալիա, մի քանիսը  
Թեհրան: Քանի-քանիսը մեռան  
դեռ պահելով իրենց բեռնաւոր-  
ուած կեանքի մանուկ հոգինսերում  
մանկութեան ու պատանեկութեան  
օրերի անկատար երազներն ու  
կարօտները:

Ապրողներիս մէջ դեռ տրո-  
փում է այդ վաղեմի երազը...

Եթէ ինձ մի երկրորդ կեանք  
ապրելու շնորհում արւի, ես կա-  
սեմ՝ թողէք պահեմ առաջին կեան-  
քիս մանկութեան առաջին օրերը,  
բայց ջնջէք միւս մասն ու պատա-  
նեկութիւնս, եթէ դրանք կրկին  
պիտի անցնեն՝ Կալկաթայի Խէ՛-  
րաթխանա բարեգործական տնում  
եւ Բենզգլեան ջունգլիների Ա.  
Թովմաս մենաստանում... նաեւ այն,  
որ այլեւս սովածութիւն չքաշեմ՝  
Հայոց Մարդասիրական ծեմարա-  
նում, ի քաղաքս Կալկաթա, յեր-

6wp.p 19

# ՀՈՒԿԱՐՁԱՆ

## ՈՒՍՈՒՑՅԱՎՊԵՏ ԲԵՆԻԱՄԻՆ ԺԱՄԿՈՉԵԱՆԻ



Արտաքույն նուերով գիրքն  
օրինակ մը ստանալու  
համար հեռաձայնել.

(626) 797-7680 կամ  
(818) 429-2322 phibennu6

Լարակազմ, մարուր տպագրութեամբ, 580 էջերէ քաղկացող գիրը: Ժողովածուն լոյս ընծայուած է Թեմիամին Ժամկոչեանի նախկին սաներուն կողմէ, որպէս Երախտիքի տուրք անոր ծննդեան 115 ամեակի արհեալ:

ՅԱՅ ասածավոր այլիքով։ Յուշարձան տողովածուն, նաև իր մէջ կ'ամփոփէ իրենց սիրեցեալ տնօրէնին կրթական, մանկավարժական, ազգային-մշակուրային, Պէյրորի Սահակեան վարժարանի կէս դարեայ իենասասառունու։

Յուշարձան ժողովածուն կը մատուցէ Թեմիամին Ժամկողեանի ժամանակից մերուն յուշերու ծաղկաբառ:

# ԴԻՒՑԱԶՆԱՄԱՐՏ ՀԱՅՈՑ ԱՅՐԱՐԱՏ ԱՇԽԱՐԴԻ ԱՐՄԱՅԻՍ ԱՐՔԱՅԻ ԱՐՄԱՒԻՐ ՈՍՏԱՆԻ ԴԱՇՏՈՒՄ

## ՊՈՂՈՍԼԱԳԻՍԵԱՆ

Տարին էր 1918, ամիսը Մայիս, գարուն էր հազել հայոց աշխարհը, հայոց աշխարհի լեռների լանջերի ծաղկունքի բոյրը քաղած հովիկները եկել էին համբուրելու ոստաններն հայրենի, պարբռնում հանդերի ալեծուփ ցորեանի ծովակներում, լեռների ձիւնոտ ջրերը երգելով վազում հանդերով։ Գարնանը, արեգակը լոյսի հեքիաթ է վառում ծառերի սաղարթներին, իրիկուններին աստղերն են իշնում իրենց ժպիտը փուելու ծաղկունքին։ Տիեզերական համանուագ է ծաղկած ծառը, ծաղիկների օրորը, նազանի ժպիտը։ Որպէս մեհեան կանգնիր նրանց առաջ, աղօթիր քու արմէն նախնիների յաւերժութեանը։ Հայոց ունչպարների հոգիների ատրուշաններում վառում էր նախնիների պատերազմի աստուած՝ Վահագնի ոգու կրակը։ Մայիս, արեւնիր վարսերով գրկել էր երկիրն հայոց, ծաղկունքի ծիածան կապել հայոց լեռների լանջերին, իր քուրացի հուրն էր շատրուանել հայոց սրտերին։ Տամարութ դարեր առաջ, չորս հարիւր լիսուն մէկ թուականի հայրենեաց ու վասն հաւատքի ճակատամարտ են մղել հօր տիրակալի դէմ։ Անցորդները պատմում են, որ իւրաքանչիւր Մայիսին այդ դաշտում նահատակների մարած սրտերից ճառագած շուշաններ են ժպտում, գիշերները լուսնեակը ալցի է գալիս, համբուրում նրանց, ապիտակ անուշ դէմքն է ցողում նրանց լոյսով։

Դարձեալ Մայիս, հայկական  
բանակի կամաւրացան զնդերի  
մարտիկները վոնտում էին թա-  
թարներին հայոց արեւելեան կողմն  
աշխարհից: Արեւի կրակ գոյներով  
դրօշը, յաղթանակի, ազատութեան  
ծիածան էր վառել շնչերի վրայ:  
Առաւուն էր Մայիսի 9ի, արեգակն  
արդար իր կրակալոյս վարսերով  
գրկել էր զէնքերը հայոց, յաղթա-  
նակի լոյսով հրավառում սրտերը  
զինուորների: Գրոհում էին դէպի  
բարձունքները գերավարուած Շո-  
շի քաղաքի, կրակ տեղում, իրենց  
սրտերի վրէժի հուրը ժայթքում  
թշնամու վրայ, Միհրի առաւոս-  
եան լոյսի ճառագայթները որպէս  
նետեր, խուրձերով ժայթքում  
նրանց վրայ: Փախաւ կակարը,  
դեռ պիտի փախնէր, պիտի հալա-  
ծէին նրանց շատ հեռուներ՝ մին-  
չեւ գետն կուր, որի միւս ափից  
արքան իրենց ազնուազարմ Ար-  
տաշէս, Ալլան Սաթենիկի մէջքն  
օղակելով, հայոց աշխարհին թա-  
գուհի էր բերել: «Մեծեր»ը արգե-  
լակեցին նրանց յաղթանակն զի-  
նարշաւը դէպի թշնամու որջը,  
ափառ:

Աշխարհի պատերազմն էր մո-  
լեզնել Եւրոպա, արեւելքը: Ուուսաց  
արքայի զօրքը, զինուոր դարձած  
հայ շինականների կամաւորական  
գնդերի հետ արշաւում էին դէպի  
Հայքեր, Վասպուրական, շտապում  
էին օծուելու Վանայ՝ Բգնունեաց,  
Ծովի ջրերում, աղօթք մրմնջելու  
նրա սրտից պայթած բլրակի վրայ  
յառնած տաճարում, նրա վէճերի,  
խաչերի վրայ Գագիկ արքայի  
քարացած արցունքները սրբելու:  
Ինչո՞ւ Մհերը իր ժայռէ դուռը  
չէ՞ր պատել, պոռթկար լոյսին եւ  
արեւելը բոնած նետեր թշնամու

վրայէ: Քաջերի քաջ դիւցազուն  
փաշան Անդրանիկ, հայոց կռուի  
Վահագնը, Դիլիմանում ջախջա-  
խել էր թուրքի բազմահազարանոց  
զօրաբանակը եւ յաղթական մուտք  
զործել Վան-Տուշպայի դարպաս-  
ներ: Այստեղի այգեստանում, հա-  
յերը ծաղկազարդ ծառերը որպէս  
զէնքեր գրկած, կենաց կուի էրն  
տուել թշնամուն: Զինուոր դար-  
ձած ուսւ չէկլիկ Արեւմտեան կող-  
մը հայոց աշխարհի լեռներին ու  
դաշտերին ազատութեան լոյսն էր  
շողում, Նեմրութթը, Սիփանը,  
Թոնդրակը, Վարագը, Արտոսը  
բերկրանքի կրակ ժայթքելով բա-  
րեւի էրն կանգնել նրանց: Հրա-  
բորք կարմիր արեւոտ լեռներն  
Վասպուրականի եւ Բգնունիւների  
ծովը իրենց ափերի մէջ պահած՝  
որպէս նախնիների պաշտամունքի  
աստրուցան մատուցում յաղթանա-  
կած զօրքին: Նեմրութի գագաթին  
բազմած հայոց հին աստուածների  
ստուբները ուազմի դաշտ իջած,  
իրենց ոգու կրակն էրն հոսում  
կոռուղների սրտերին:

Տապալել էին ոռուսի արքայի իշխանութիւնը, սպաննել նրան։ Իրենց տիրապետութեան յաւերժացման համար զիջում էին տարածքներ, զիջում ոռուսի զինուորական յաղթանակների վառքը։ Արեամբ տիրած տարածքներից ոռուս զինուորաները տուն էին վերադառնում։ Փլուել էր Արեւմտեան Հայաստանի ռազմաճակատը, հայերը կազմաւորել էին Երկրապահ զօրամաս, հայոց բանակն ու ժողովուրդը առանձին էին դիմագրաւելու թշնամուն։ Խախտելով «Անդրկովկասի Կոմիսարիատ»ի հետ կնքուած զինադադարի պայմանագիրը, թրքական բանակները արշաւում էին արեւելք, միանալու ցեղակից թաթարներին ու ապա դէպի Արալ, Թուրան, իրենց ցնորածին նոր կայսրութիւնը հիմնելու։ Ներխուժել էին Ալրարատ, Արարատեան դաշտ, հայոց Արմալիս արքայի ոստան Արմաւիրի ու Ապարանի ռազմաճակատներով սպառնում էին տիրել Երեւանին։ Նուաճողները սպաննել էին հայոց աշխարհի նախնիների անունները, դարձրել Սարդարապատ, Հոկտեմբերեան, նախագահն հայոց հրամայել էր նորից վառել հայոց աշխարհի արքաների, իշխանների, դիւցազունների, իմաստունների, հին աստուածների լոյսը, նորէն Արմալիս արքայի ոստան Արմաւիրն էր այն։

Թշնամին՝ «գուշչմանը» հա-  
յոց աշխարհի սրտին՝ մայր ոստա-  
նին, մայր տաճարին էր սպառ-  
նում: Գարեգինը թովսկիեան, նրա  
զանգերը հնչեցին հրամայեց հա-  
յոց աշխարհի բոլոր տաճարների  
զանգերը ղօղանչել կռուի կանչել  
հայերին բոլոր: Կռիւ Արաստ-  
արաքսի ափերին յանուն ցեղին  
սրտի զարկերի, յանուն ցեի սեր-  
մին, յանուն յաղթանակի: Զօրքին  
հայոց կռուի տարան նազարեէկ-  
եան, Սիլիկեան զօրավարները: Հա-  
զարհազար վասպուրականցի ար-  
մէն-հայեր, վանեցիներ իրենց զէն-  
քերն ու մանչերը գրկած հասել  
էին Այրարատ: Հայոց աւերռուած  
ոստանների՝ Զէյթունի քաջորդի-  
ները, Սամսայ ու Մշոյ լեռնական-  
ները, յոցն շնէուրը իր քաջերով  
ու թնդանօթներով, Ղարաբաղցի  
Փիրումեան զօրավարները իրենց

լեռների դիւցագուններով, մահապարտ գունդով, իրենց զէնքի փառքին հաւատարիթ ուսւ սպաներ ու զինուորներ, երկրապահ օղբքն հայոց, արեւելեան կողմը հայոց աշխարհի շինականները, Մայիսի քսան երկուսին, արեւի արդար լոյսի բխումին, գրոհեցին թշնամու վրայ: Նրանք մրրկածին արեւորդի քաջեր էին, որոնք կոռուի էին ելել վրէժի կրակով խոցելու թշնամուն, սրով եկածներին հրովողակիզելու: Արմէն-հայերի նախնիների հին աստուածներն էին իշել հայոց քարէ սրտի՝ Արարատի զագաթից, արեգակից յառնած բոցերը նետում թշնամու վրայ: Վահագնը երկնակամարի ծիածանը պրկած որպէս աղեղ, ամպերի շանթերը որպէս նետեր տեղում թշնամու վրայ: Ընկրկեցին, պատուեցին թշնամու բազում-բազում սրտեր, փախնում էին ով կարողացել էր ճողոպրել հայուց սրից: Ափսոս որ դադարեցրել էին գրոհը, թշնամու հետապնդումը կարող էր համնէր մինչեւ Կարս, նրա ամրոցում տօնելու յաղթանակը, նրա տաճարում փառաբանները հինու նոր աստուածներին:

Դուշմանը Արագածի լանջերին էր, թիկունքից խոցելու հայոց մայր ոստանը: Հայկի զարմից ապարանցի շինականների կրիւ էր, արգելակել նրանց ընթացքը դէպի իրենց շէներ ու մայր ոստան: Նրանց կոռուի էր առաջնորդում Ապարանի Արագիւղի բնակիչ, յունական բանակի գնդապետ՝ Արսէն Սամսոնի Տէր Պողոսեանը: Նա Րաֆֆու «Խենթի» Սամսոն Տէր Պողոսեանի որդին էր: Քաջին քաջն էր ծնել: Ամէն զիւղ իր որդիներին կորու էր ճամբել: Դուշմանին յաջողուել էր ճեղքել ու ապաձակատի առաջին զիծը, նահանջել էին դէպի երկրորդ դիրքեր: Դուշմանի բանակի հրամանատարը հրամայել էր երեք ուղղութիւններով վճռական յարձակման անցնել: Ապարանի ճակատը համարուել էր ծաւալուած մարտերի կեղրոնքը: Դուշմանը անցել էր յորդացած Քասախի գետը, դուրս գալու կուռողներու թիկունք, ընկճելու համար նրանց դիմադրութիւնը: Մարտի դաշտ հասած նոր ջոկատները, գրաւելով գետի ափերի բարձունքները, կրակի տակ առել նրանց, ստիպել նահանջելու: Դուշմանի գերակշիռ ուժերի նոր գրոհը ճեղքել էր պաշտպանութիւնը, անցել կոռուղների թիկունքը: Կոռուղների նոր գրոհները փակել էին ճակատը, փակել

Նրանց նահանջի ճանապարհը, դուշ-  
մանը յայտնուելէ կը երկկողմ կրա-  
կի տակ, գլխովին ոչնչացուել։  
Կռուղիների գրոհները ստիպել էին  
դուշմանին նահանջելու։ Արագա-  
ծի լանջերի ապարանցիների կոփուր  
փրկել էր իրենց շէները եւ հայոց  
մայր ոստանը։ Ալդպէս է լինում,  
կռուղի կը փրկես քու շէնը, քու  
որդիներին, ինչո՞ւ կոփու չտուինք  
հայոց հայքերում, ափսոս։

Դուրս, հայ մարդ, եթէ կարող  
ես գոցել ակներդ, անէացիր մի  
պահ այս աշխարհից, մարտիկ  
դարձած քեզ տար այդ ճակատա-  
մարտի բոցերի մէջ: Պիտի տեսնել  
հայը ինչպէս էր գրոհում: Արա-  
րատին որպէս վահան գրկած, Արա-  
գածի վրայ վառուող կանթեղը  
որպէս աստղ վեր պահած, արեւն  
էին իշեցրել դաշտի վրայ, նրա  
կրակ ճառագայթներով այրում  
թշնամու գէնքերը, մարտուն նրանց  
լոյսը: Դու, կուոի դաշտում պիտի  
տեսնես հրամանատար Դանիէլ-  
Բէկ Փիրումեանին կարմիր հա-  
գած, արեւի ճառագայթները որ-  
պէս նիզակ պարզած լեռնական  
քաջերին գրոհի տանում: Մտիր  
Պօղոս Փիրումեանի մահապարտ-  
ների գունդ, մահ սփրի'ր քու  
առաջ, մենք շատ ենք մահ տեսել: Պիտի տեսնես ինչպէս էին այր-  
ում Մայր Արաքսի կամուրջները,  
ինչպէ՞ս էին նրա ջրերը զայրոյ-  
թից փոթորկել, այն ճողփող թշնա-  
մուն տանում իր յորձանուառը: Եւ  
ինչքան քու սիրտը պիտի խայտա:  
Պիտի տեսնես ինչպէս էին այր-  
ում Մայր Արաքսի կամուրջները,  
ինչպէս էին նրա ջրերը զայրոյ-  
թից փոթորկել, այն ճողփող թշնա-  
մուն տանում իր յորձանուառը: Եւ  
ինչքան քու սիրտը պիտի խայտա:  
Պիտի տեսնես ինչպէս էին Զէլթունցիների նժոյգները Զալալ  
Քուրկիկի նման մոռնչում, ինչպէս  
էին Սամնայ ու Մշոյ դիւցազները  
իրենց Դաւթի թուր կեծակի շան-  
թերը շաշում թշնամու վրայ: Պի-  
տի տեսնես ինչպէս էին յոյն Շնէ-  
ուրի թնդանոթները փլատակում  
թշնամու մարտական դիրքերը: Մարտի դաշտում պիտի տեսնես  
թշնամու վրայ սլացող հեծեալ  
Յովհաննէսին, զինուոր դարձած  
հայ իմաստուններ՝ Ակսելին, Ղա-  
փանցեանին, Մանանդեանին, Ղա-  
րիբեանին, Թոփչեանին: Եւ դու  
հայ մարդ ինչպիսի հրճուանքով  
պիտի ականատեսը լինես թշնամու  
փախուստին: Եւ այդ գարուն Մա-  
յիսին գնա' աղօթիր Մայր տաճա-

覃文平 18

UuUhU

ՀԱՐԱԳԱՅԻՆ

# ଫୁଲଟାର୍ - କୁଳାନା ୧୦୦୦ ପଡ଼ି

. I wish to subscribe to Massis W

**posed a check for (or**

\* \$50,00 for USA

\* \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.

**\$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overs**

Name: \_\_\_\_\_  
Address: \_\_\_\_\_

**Address:** \_\_\_\_\_

**Country:** -----

Tel :----- Fax : -----

## ՄՐԱՓԻՆ ԿԱՐԵՒՌՈՒԹԻՒՆԸ

Բոլորս ալ կը սիրենք կէսօրէն ետք երկնալ, կամ նոյնիսկ երբեմն թէկուզ քանի մը վայրկեան քնանալ՝ անկէ ետք աւելի աշխոյդ եւ կայտառ զգալու համար; Իրականութեան մէջ մրափը շատ կարեւոր է, որովհետեւ մարմինը օրուան ընթացքին 13-15 վայրկեան հանգիստի պէտք ունի: Երբ զգաս, թէ մօտղ ուժականութիւնը կը նուազի, անմիջապէս ուղղուիր դէպի անկողին կամ նստարան, եւ փորձէ կարծ ժամանակ մը մրափէլ, որովհետեւ այդ մէկը կարեւոր է մարմինին համար եւ զայն կը քաջալերն բժշկական բոլոր ուսումնասիրութիւնները:

Կարծ մրափը կրնաց անմիջապէս ջնջէլ յոգնութեան նշանները եւ ամրապնդէլ արթնութիւնն ու կեղրնացումը: Գիտական արդիական ուսումնասիրութիւնները համաձայն կը գտնուին այս կարծ մրափով կը բարձրանայ մեր ուժականութեան մակարդակը, բայց ոչ թէ չափազանց աշխուժութիւն ունենալու աստիճանի: Ասկէ աւելի լատ կէտը այն է, որ լարուածութեան մակարդակը պակւելով, սահման դրուած կ'ըլլայ սրու հարցերու կուտակուող գործոնին եւ կը դանդաղեցնէ բջիջներուն ծերացումը:

\* Սրտին համար դրական առաւելութիւններ.

Մրափը կը պաշտպանէ սրտի հիւանդութիւններէ, մանսաւանդ աշխոյդ տղամարդոց մօտ: Յոյն ժողովուրդը ընդգրկող կատարուած գիտական արդիական ուսումնասիրութիւնները համաձայն, կէսօրէ ետք միայն 30 վայրկեան մրափէլը 37% սոլոսով կը նուազեցնէ սրտի եւ երակներու մահացու հիւանդութիւններու ենթարկուելու վտանգը: Նախապէս կատարուած ուսումնասիրութիւնները համար վաստակած է, իսկ շատ կարծ վիշեր մը ունեցած ըլլալու կամ մինչեւ ատուտու արթուն մնալու հարցը նախատեսելու նպատակով կատարուած մրափը պէտք է երկարի 1-1.5 ժամ:

\* Գայաստացնող ազդեցութիւններ.

Կէսօրէ ետք 20 վայրկեան մրափ առնելը, յաջորդող 2-3 ժամերուն ընթացքին մէծ չափով կը բարձրացնէ անհատին արտադրողական ուժը: Մրափը ուղեղին առիթ կուտայ արթուն եւ զգաստ մնալու, ինչպէս նաեւ վերալիցքաւորուելու: Հետեւաբար, երբ արթնանաք՝ ուժականութեան, կագուրուածութեան եւ կենաւուակութեան մէծ զգացումներ կ'ունենանք: Ուրեմն, յստակ իրողութիւն է, թէ օրուան ընթացքին հանգիստի կարծ պահ մը առնելով առիթ կ'ունենանք երկար ժամանակ տինամիք վիճակ մը պահելու:

\* Յիշողութեան եւ ուշիմութեան ամրապնդում.

Մրափը կարեւոր դէր կը իսպայ ջղային համակարգի բջիջները վերանորոգելու, յիշողութիւնը բարելաւելու եւ ուղեղային կարողութիւնները աշխուժացնելու գծով: Օրինաւոր կէրպով մրափ առնող անձերը դէպքերու աւելի մանրամասնութիւններ կը լիշեն քան զայն չառնող անձերը: Այս իրողութիւնը ապացուց կը հանդիսանայ այն կէտին, թէ քունը անհրաժեշտ է ուղեղին մէջի լիշողութեան բարձրացնելու գծով:

\* Լարուածութեան դիմադրութիւն.

Մեր մարմինը կը ներգործէ լարուածութեան հետ՝ Քորթիզով հորմոնի յանդեխալ արտադրութեամբ: Սակայն այս հորմոնը, որ ծանօթ է

որպէս լարուածութեան հորմոն, քունի ընթացքին անոր քանակը շատ կը նուազի: Հետեւաբար յստակ է այն երեւոյթը, թէ օրուան կիսուն կարծ ժամանակով քնանալը լաւ միջոց մըն է ջղային լարուածութիւնը թիթեւցնելու, ջղայնութեան վիճակներէ փախուառ տալու եւ լաւ տրամադրութիւն պահելու:

Զուգագիպութիւն չէ, որ կարծ մրափէ մը ետք (10-30 վայրկեան առաւելացոյնը) աւելի աշխոյդ եւ կայտառ կը զգանք մենք մեզի: Ինչպէս նաեւ այս կարծ մրափով կը բարձրանայ մեր ուժականութեան մակարդակը, բայց ոչ թէ չափազանց աշխուժութիւն ունենալու աստիճանի: Ասկէ աւելի լատ կէտը այն է, որ լարուածութեան մակարդակը պակւելով, սահման դրուած կ'ըլլայ սրու հարցերու կուտակուող գործոնին եւ անձերը ծերացումը:

\* Քունի պակասի հաստոցում.

Քունի պակասը հաստոցելու համար, մրափը՝ առաւտուուն ուշ արթնային աւելի կարեւոր է: Քունի զրկուածութեան քրոնիկ պարագաներու համար, 15-20 վայրկեան մրափը բաւարար է, իսկ շատ կարծ վիշեր մը ունեցած ըլլալու կամ մինչեւ ատուտու արթուն մնալու հարցը նախատեսելու նպատակով կատարուած մրափը պէտք է երկարի 1-1.5 ժամ:

\* Գիրութեան դէմ բուժում.

Ուսումնասիրութիւնները իյայտ բերած են, թէ որոշ կապ մը զոյլութիւն ունի քիչ քնանալու եւ ախորժակի զրկուածութեան միջեւ, ինչ որ կը բազմապատկէ գիրութեան եւ շաքարախտի ենթարկուելու վտանգը: Լեփթին կոչուող հորմոնը, զոր կ'արտադրեն ճարպացին բջիջները եւ որմու ուղեղին կը տեղեկացնեն յագեցած ըլլալու մասին, անոր միջին չափը բաւական կը նուազի քունի պակասի պատճառով, մինչ կրիլին՝ ախտորժակը գրգուող սուամոքին արտադրած հորմոնին միջին չափը նկատելի կէրպով կը բարձրանայ, ինչ որ կը մղէ ուտելու, մանսաւանդ ճարպու ուտելիքները, որոնք դժբախտաբար կը կուտակուին մարմնին փորին բաժնին մէջ: Ցաւալին այն է, որ փորի գիրութիւնը ոչ թէ միայն տղեղութիւն կը յառաջացնէ, այլ նաեւ կապակցութիւն ունի ինսիւլինի դիմադրութեան հարցին հետ, ինչ որ արդէն կը դրսեւորուի՝ չաքարախտի եւ սրտի հիւանդութիւններու տեղի տալով:

\* Բորբոքումներու դէմ պաշտպանութիւն.

Քորթիզով միայն լարուածութեան պատասխանասուու հորմոնը չէ, այլ նաեւ կը կանոնաւորէ մարմնին մէծ պաշտօնները, սկսելով դիմադրութականութիւննէ: Իրականութեան մէջ, բորբոքումներու դէմ գործող եւ դիմադրութականութեան թափ տուող անոր ազդեցութիւնը հիմք կը համարուի շարք մը դեղահատուու: Իսկապէս, Քորթիզով կ'ապահովէ մարմնին պաշտպանութիւնը ապահովող ճերմակ բջիջներու վերադարձը, դիմադրութիւննէն լիարդ, գեղձերը եւ արեան մէջ անոնց քանակը կ'աւելից նէ: Եւ որովհետեւ քունը առիթ կուտայ Քորթիզով հորմոնի հաւասարական դիմադրութիւնը լիարդ, գեղձերը կ'արդին կարծ պարպելու եւ նոր տեղեկութիւններու առջեւ առիթը լայն բանալու:

## ԳՐՈՂԸ ՏԱՐԱՒ ԳՐՈՂԻՆ ԽԻՂԱԾ

### Շարունակուածէջ 7-էն

Քելութեանը գիտակից հայ գրողը կրնաց իր արժանապատութիւննը պահպանել՝ ընդդիմադրի դիրքերու վրային:

Հայաստանի ժողովուրդը կամաց կարծ մրափէ մը ետք (10-30 վայրկեան առաւելացոյնը) աւելի աշխոյդ եւ կայտառ կը զգանք մենք մեզի:

Զուգագիպութիւն չէ, որ կարծ մրափէ մը ետք (10-30 վայրկեան առաւելացոյնը) աւելի աշխոյդ եւ կայտառ կը զգանք մենք մեզի:

Զուգագիպութիւն չէ, որ կարծ մրափէ մը ետք (10-30 վայրկեան առաւելացոյնը) աւելի աշխոյդ եւ կայտառ կը զգանք մենք մեզի:

Զուգագիպութիւն չէ, որ կարծ մրափէ մը ետք (10-30 վայրկեան առաւելացոյնը) աւելի աշխոյդ եւ կայտառ կը զգանք մենք մեզի:

Զուգագիպութիւն չէ, որ կարծ մրափէ մը ետք (10-30 վայրկեան առաւելացոյնը) աւելի աշխոյդ եւ կայտառ կը զգանք մենք մեզի:

Զուգագիպութիւն չէ, որ կարծ մրափէ մը ետք (10-30 վայրկեան առաւելացոյնը) աւելի աշխոյդ եւ կայտառ կը զգանք մենք մեզի:

Զուգագիպութիւն չէ, որ կարծ մրափէ մը ետք (10-30 վայրկեան առաւելացոյնը) աւելի աշխոյդ եւ կայտառ կը զգանք մենք մեզի:

Զուգագիպութիւն չէ, որ կարծ մրափէ մը ետք (10-30 վայրկեան առաւելացոյնը) աւելի աշխոյդ եւ կայտառ կը զգանք մենք մեզի:

Զուգագիպութիւն չէ, որ կարծ մրափէ մը ետք (10-30 վայրկեան առաւելացոյնը) աւելի աշխոյդ եւ կայտառ կը զգանք մենք մեզի:

Զուգագիպութիւն չէ, որ կարծ մրափէ մը ետք (10-30 վայրկեան առաւելացոյնը) աւելի աշխոյդ եւ կայտառ կը զգանք մենք մեզի:

Զուգագիպութիւն չէ, որ կարծ մրափէ մը ետք (10-30 վայրկեան առաւելացոյնը) աւելի աշխոյդ եւ կայտառ կը զգանք մենք մեզի:

Զուգագիպութիւն չէ, որ կարծ մրափէ մը ետք (10-30 վայրկեան առաւելացոյնը) աւելի աշխոյդ եւ կայտառ կը զգանք մենք մեզի:

Զուգագիպութիւն չէ, որ կարծ մրափէ մը ետք (10-30 վայրկեան առաւելացոյնը) աւելի աշխոյդ եւ կայտառ կը զգանք մենք մեզի:

Զուգագիպութիւն չէ, որ կարծ մրափէ մը ետք (10-30 վայրկեան առաւելացոյնը) աւելի աշխոյդ եւ կայտառ կը զգանք մենք մե







LOS ANGELES

# 2012 AGBU-AYA | ՀԳԸՄ-ՀԵԿ WORLD GAMES



July 28, 2012 - August 5, 2012

## OPENING CEREMONY

Sunday July 29th, 2012

Pasadena Community College, Pasadena, CA

## VICTORY BALL

Saturday August 4th, 2012

Universal Studios Backlot (Spartacus), CA

for additional information

Tel: 626.794.7942 / Email: [info@agbugames.com](mailto:info@agbugames.com)

[www.agbugames.com](http://www.agbugames.com)